

իրենց անհրաժեշտ ատորանքներ՝ մետաքս, երկաթեղեն, ամանեղեն, օճառ և այլն:

XIX դ. սկզբին Ղզլարում արդեն գործում էին մի քանի գործարաններ՝ հրկու մեծաքսադործական, 11 սեկի և կաշվի, օրկու ներկի, մեկ օճառի և 46 օղու գործարաններ: Կային նաև ոսկերչական և անագապատման արհեստանոցներ: Հատկապես մետաքսագործության մեջ Ռուսաստանում Ղզլարը մինչև XIX դ. կեսը նշանակալի տեղ էր գրավում: Ղզլարի շուկան հանվող հիմնական ապրանք-

ներն էին՝ դինին, օղին, մետաքսը, բրինձը, անասունները, կաշին, յուղը, քնջութը, տորոնը, կապարը, մեղրը, միրգը, ձկնեղենը (րալիկ), խավիտը և այլն: Հատկապես եկամտաբեր էին դինին ու օղին:

Ղզլարը, որպես առևտրական կենտրոն, իր նշանակությունը պահեց մինչև XIX դ. կեսերը, որից հետո ավելի նշանակալի դարձան Գրոզնին, Վլադիկավկազը (Օրջոնիկիձե), Պյատիգորսկը, ուր երկաթուղին ավելի շուտ մուտք գործեց:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ղզլարի հայերի առաջին մտահոգությունները էր հողերի սոռոգման, ջրատար ցանց ստեղծելու հարցը, որի առթիվ հրավիրված ընդհանուր ժողովը որոշեց Թերեքից մի մեծ ջրանցք անցկացնել և դա ճյուղավորել այնպես, որ յուրաքանչյուր այգի ունենա իր առուն: Կառավարությունն ընդառաջեց ղզլարցիներին, պետական դանձարանից րաց թողնվեց որոշ զույմար այդ աշխատանքների համար:

Քանի որ Թերեքի մակերեսը քաղաքի մակերեսից բարձր է, ուստի հեշտությամբ վճռվեց այն հարցը, թե ինչ ուղղությամբ պիտի տարածվեն այգիներն ու արոտավայրերը, փորվեին ջրանցքներն ու առուները: Այգիներ տնկվեցին Թերեքի գետալից անմիջապես դեպի հյուսիս և հյուսիսարևմուտք, ուր հողն էլ միանգամայն համապատասխանում էր այգեգործությանը: Հետագայում այգիների գոտին Ղզլարի շուրջը գնալով ընդարձակվեց:

Նոր առուներ փորելու, հները նորոգելու և դրանց օգտագործումը կանոնավորելու աշխատանքներում սիրով օգնության էին հասնում հարեան ալլագգի այգեգործները, երբմե կիսելով նույնիսկ աշխատանքի ծախսը: Բարեկամական նման հարաբերություններ հաստատվեցին հստակապես մանր այգետերերի միջև, որոնց շահերն ու նպատակները իրագործելի էին միայն միասնարար հանդես գալու դեպքում: Խոշոր այգետերերը (կալվածաատերերը) կախում չունենալով մանր այգետերերից ջատ հաճախ իրենք էին թելադրում նրանց «մասալի» (րերքի) արժեքը ընթացիկ տարվա համար, հարստահարում էին նրանց, էժան գներով գնում բերքը կամ շիրան,

որը իրենց մատաններում մշակելուց հետո, արտահանում էին Ռուսաստանի քաղաքները՝ կրկնակի ու եռակի դներով:

Երկրագործություն: Ղզլարի հայերը, ի տարբերություն այգեգործության, զխավորապես խաղողագործության, ավելի քիչ էին զբաղված դաշտամշակությամբ: Ավելորդ հող և ժամանակ դրա համար գրեթե չկար: Մեկ այդին հագիվ լինել մեկ կամ երկու դեսյատին: Այդ աարածությունը նրա տերը պիտի ռաժաներ մի քանի մասերի՝ խաղողի (մեծ մասը), պտղատու ծառերի, րանջարանոցի և րակի, սւր դտնվում էին իր փոքրիկ րնակալանը և ամրարը: Իսկ չքավոր այգեգործը նույնիսկ այդ րնակարանն էլ չունեւր, ալ շինում էր վրանի պես մի րան, ուր կարելի լինել քնել և քամուց ու անձրեւից պաշտպանվել, և ամրար, որտեղ պահվում էին այգեգործական գանաղան իրեր ու գործիքներ: 2—3 մ երկարությամբ և 1—1/2 մ լայնությամբ հասարակ տներ ու ամրարներ, որոնք ծեփվում էին կավախառն գոմաղրով: Տանիքը շինում էին թեք և ծեփում հարդախառն ցեխով:

Ջքավոր այգեատերերը աշխատանքում՝ մեծ կարիք ունեին օգնականների և, քանի որ մշակներ վարձելու հնարավորություն չունեին, գործի էին դնում իրենց րնտանիքի րոլոր անդամներին: Գյուգատնտեսական գործիքները, որոնք անհրաժեշտ էին այդում, ձեռք էին րերվում քաղաքում: Դրանք կարելի էր գնել շուկայում կամ պատվիրել մասնավոր արհեստանոցում, դարրնոցում:

Գործածվող Երկրագործական՝ գործիքները նույնն էին, ինչ հարեան աղդերին՝ ուուներին ու կաղակներին: Ընդունված գործիքներն էին՝ արորը, որին հաջորդեց երկաթյա դուրանը,

րահր, քլունգը, փոցխը, մարկեզը, գերանգին, մանգաղը և այլն: Մանր այգետերերը բանջարանոցին հստկացված հողը մշտկում էին մեծ մասամբ ձեռքի գործիքներով:

Այգու վերին մասում, ըսկի մոտ, մի փոքր տարածություն էր հատկացվում խոտաբույսերին, որ արածում էին սեփական ձին, մեկ, երկու կովը, կամ թե, մեկ կամ երկու կթան գոմեշները: Անասունների համար գեռ ամռան վերջում այգեգործը պատրաստում էր ձմեռվա պաշարը՝ գեղերով խոտ ու գալի, որը նա գնում էր քաղաքի շուկայում: Եթե այգում տեղ չէր գտնվում անասուններին արտածանելու համար, այդ գեղերում մի քանի (4—5) այգեգործներ միմյանց հետ համաձայնության էին գալիս և իրենց այգիների սահմաններում բացտա արոտավայր հասկացնում: Անասունների համար: Անասունների աղբը կիսվում էր մի տեղ, իոկ գարնանը գրանով պարարտացվում հողը:

Խոշոր այգետերերը կամ կտվածատերերը վաղ ու ցանքը կաարում էին վարձկան մշակների և անասունների միջոցով: Գուլանին լծում էին ձի, եղ կամ արու գոմեշ: Միայն սովետական իշխանության տարիներին Ղլլարում մոտոք գործեցին գյուղատնտեսական մեքենաներ՝ տրակտոր, սերմնացու, կալսիչ, սերմազտիչ և այլն:

Խոշոր այգիների տմենափոքր օգտակար տարածությունն անցնում էր 30—40 գեսյատինից: Նրանք հնարավորություն ունեին իրենց հողերում ցանելու նաե ըրինձ, սիմինգր (եգիպտացորեն), քնջութ, տորոն, կանեփ, կտավհատ և այլն: Կանեփի թելերից պատրաստում էին կտավներ, պարան և այլն, իսկ սերմերից հանում էին յուղ: Սրադմունքներից էր նաև շերամտպահությունը, որը XVIII դ. կեսից սկսած տարածված էր Ղըղլարում և շատ եկամտարեր էր: Խոշոր այգետերերը իրենց այգիներում կառուցում էին հատուկ լինքեր, որոնց մեջ պատրաստված գարակտհարկերում պահում և աճեցնում էին շերտմը: Շերտմի որդը կերակրելու համար այգում տնկում էին թթենիներ:

Ղլլարում մշակվող ամենահին բույսերից են քնջութն ու աորոնը: Երկուսն էլ համարվում են շատ արգյունավետ բույսեր: Քնջութը միամյա յուղարեր բույս է, որի սերմերից սաացված յուղը գործածվում է կերակրի, սննդի արգյունարերության մեջ և այլն: Նրա մանրած սերմերից պատրաստում են հավա և այլն: Տորոնը (марена)

բույս է, որի արմատներից ստացվում է մուգ կտրմիր գույնի ներկ: Նրանով ներկում են մետաքսյա, ըրգյա և բամբակյա գործվածքներ: Այս ներկից մեծ քանակությամբ ուղարկվում էր Մոսկվա, Պետերբուրգ, Աստրախան և ավելի շատ Պարսկաստան: Արտագրում էին տարեկան մոտ 5 հազար փութ ներկ:

Հին ժամանակներում հայ մարգը հավառում էր, որ կախարդական միջոցներով կարելի է չաբը խափանել: Ցանքսերը իրր Շլար աչքից» և «խոսքից» գերծ պահելու համար Ղլլարցի ցանքների կողքին երկաբ մի ցից էր կանգնեցնում և վրան ամրացնում եղտն, ձիու և կամ շան գանգ:

Նախքան աշխատանք սկսելը թե՛ գաշամաշակության և թե՛ այգեգործության համար անջուշանշանակություն ուներ եղանակի գուշակումը: Բնության երևույթներին տեղացիք տալիս էին զանազան մեկնարանություններ և գուշակություններ: Համարվում էր, որ Կասպից ծովից փշոզ քամին ամռանը շոգ է բերում, ամռանը՝ ցուրտ: Ծովի քամին փշիլիս, Ղլլարի պառավները ասում էին՝ «ծովի գիծ քամին վեր ա կենում, հուշողում (փոթորիկ) կիլի, ա՛յ ամպերը գոռգոռում են, կեծակ ա խփում, շուտ տուտերը կպպոտեք, նեքսե մտեք»: Օրը մթնում է, ըլլորը ներս են մտնում, որը սրբի առաջ լամպ է վառում, որը մոմ կամ կանթեղ ու աղոթում են, որ գիծ քամին շուտ հանգարավի:

Երևկության մայրամուտի ժամանակ եթե երկինքը նարնջագույն էր, գուշակում էին լավ եզանակ: Եթե երևկության հորիզոնը շառագունած էր, ասում էին՝ քամի է լինելու: Երբ օրը հանկարծ մթնում էր, սե ամպեր էին կուտակվում, գուշակում էին՝ ճիպտի պես անձրև (անդատարափ), որից հետո լինելու էր լույս ու ծով: Եթե շոգն ու տոթը սկսում էր վաղ առավոտից, և արևը մեկ երևում էր, մեկ թաքնվում ամպերի աակ, քամու ոչ մի նշույլ, տսում էին՝ «էսօր շոգից կխաշվենք»: Այդ ժամանակ ցանկանում էին՝ «կարմիր շապիկով աղա, սարից մե քիչ հով պեր (րեր), որ հովանանք»: Եթե հովը փշիլ է, ասել են՝ «Հայգար, հայգար, մեռնեմ ասսու էրեսին, ասսու սիրտը լեն ա, մեր սիրտը՝ նեղ»: Մարա ամսվա քամուց շեն վախեցել և ասել են՝ «Գիծ մարար իրա գիծությունը չի մոռանում»: Մայիս ամսվա անձրևի մասին այսպիսի ասացված կար՝ «Մարթ ու կնգա կոիվը ոնց որ մայիսվա անձրևը. անձրևից էգով աբե օր կիլի»: Եթե աշնանը սարգը փողոցում ոս-

տայն էր գործում, գուշակում էին, որ ձմեռը տաք կլինի, «քեսիրի ծմեռ տ իլելու»:

Այգեկութի վերջը, անբեաթափի ժամանակ, ևթև ծառերին սասաիկ «ղոսվ» (եղյամ) էր նրստում, գա հիշեցնում էր ղղլարցուն, որ ձմեռվա հոգար քաշի: Սառը քամի փչելիս, ասում էին՝ «սա ծունի (ձյուն) հավա տ»: Առաջին ձյունը Ղղլարում առիթ է տվել ասելու՝ «Ձմեռը պարի սհտթի իլի»: Եթե թռչունները պատսուղարվելու համար փորձում էին տանիքների տակը մտնել, ասում էին՝ փոթորիկ է լինելու: Երբ ճնճղուկները աղմուկով խմբվում և իրար սեղմվելով ծվծվում էին՝ նույնպես փոթորիկի նշան էր համարվում: Եթե ագռավները կռուալով թռչում էին, գուշակում էին, որ անձրև է լինելու: Եթե ծիծեռնակները ցածր էին թռչում, նույնպես գուշակում էին՝ անձրև:

Բունջաւարութիւնը: Ղղլարցու բունջաւարնոցը գտնվում էր հիմնականում այգու բակում, տանը մոտ, ուր ցանվում էր գլխավորապես այն, ինչ կարեւոր էր ընտանիքի ամենօրյա կարիքների համար՝ սոխ, սխտոր, կարաոֆիլ, կաղամբ, գաղար, բաղուկ, բողկ, ծիծակա (տաքգեղ), լոբի, վարունգ, լոլիկ, բաղրիջան, կանաչեղենից՝ սամիթ, թարխուն, համեմ, կոտեմ և այլն: Առանձին տեղ էր բոնում «թուրին»: Այս բույսը շատ նման է գգմին, միայն ավելի փոքր է:

Առանձին տեղ էր հատկացվում բոստանին, առանց որի այգեհաները յուր գնալ չէին կարող: Բոստանին հատկացված հողը պարարտացվում էր ավաղով ու գոմաղրով, ապա ցանում էին ձմեռուկ, սեխ և գգում: Սրանք ավաղուտ հողերում հիանալի աճում են, ջուր շատ չեն պահանջում: Որքան ամառը տաք և երկարատե էր, այնքան ավելի քուղցրահամ էին լինում սեխն ու ձմեռուկը: Ղղլարի ձմեռուկը հայտնի է իր մեծությամբ: Երբեմն պատահում են 16—20 կգ ձմեռուկներ: Ղղլարցու սեղանին ընգունված էր օգտագործել «ծնեփակը» (ծնեբեկ) և կապարը: Դրանք, որպես ձմեռվա պաշար, աղում էին և պահում կալե ամանների մեջ: Ձմեռը ծնեփակը տղաչրից հանում են, լվանում և նոր եփում: Ամառվա բանջարներից շատ սիրված էր թուրին, որը պատրաստում էին յուղով կամ ձեթով և օգտագործում որպես կերակուր:

Տարածված էր նաև «ղանձիլը», որն իր բարակ թելերով շաա նման է ծլած սոխին, ունի սխտորի համ: Սրանից պարասաել են պասուց կերակուր, որ կարելի է ուտել ձեթով և քացա-

խով: Ղղլարցու սիրած կանաչեղենն է սամիթը, համեմը, կոտեմը, թարխունը, կանաչ սոխը, պիտունտն, ոռհտնը, սալաթը և այլն:

Այգեկութիւն և գինեգործութիւն: 1651 թվականից կա տեղեկություն, որ Թերեքի շրջակայքում եղել է վայրի խաղող: Ցար Ալեքսեյ Միխայլովիչին հեաաքրքրում էր, թե արգյոք տեղի ընակիչները խաղողից գինի կամ օղի չե՞ն պատրաստում: Ըստ տեղեկության հայտնի է գտնում, որ Թերեքի մերձակա անտառներում կա վայրի խաղող², և շրջանի կաղակները ղրաղվում են գինեգործությամբ, պատրաստում ոգելից խմիչքներ: Փորձի համար մի քանի կաղակների պատվիրում են թերեքյան խաղողից գինի պատրաստել և ուղարկել Աստրախան:

Երբ 1735 թ. Ղղլար ավանը գարձավ բերգաքաղաք, շաա հայ գաղթականներ այսանդ գալով տնտան խաղողի այգիներ և գինեգործությունը ծանոթ բնակիչների շտյերն է՛լ ավելի ընգտրձակեցին այգեգործությունն ու գինեգործությունը, մանավանդ 1798—99 թթ., երբ հայ գաղթականների թիվը շատ մեծացավ:

Հայերի գաղթից հետո Ղղլարում խաղողի և պտղատու այգիների վերածվեցին նաև մինչ այդ բոլորովին ոչ պիտանի հողերը: Նոր այգիների տարածքը ուներ 20 կմ երկայնություն, 10 կմ լայնություն: Ծանապարհորգ Բիրբըշաեյի վկայությամբ Ղղլարի այգիների աարածքը XVIII դ. վերջում հասնում էր երկու հաղար դեսյատինի, իսկ գինու տարեկան արտագրությունը՝ 700 հաղար գուլլի: 1804 թ. այգիների տարածությունը արգեն 7.800 գեսյաաին էր: 1815 թ. գինու արտագրությունը մոտ 1 միլ. 600 հաղար գուլլի էր հանում, սպիրտինը՝ 160 հաղար գուլլի: Պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ 1829 թ. Ղղլարում և շրջանում գործել են 75 օղու գործարան, որոնց արաագրությունը հավասար է եղել 202,564 գուլլի:

Տեղական սպիրտի ձեռնարկություններից այգ ժամանակ հայտնի էր Իլմիրյան եղրայրների ֆիրման, որը գործում էր 1792 թվականից: Հայտնի էին նտե Մամաջանյանների, Քալանթարյանների, Սրեշյանի, Գալստյանի և Բերոյանի ֆիրմաները:

Այգիների աարածմանը ղգալիորեն նսպաս-

² Վայրի խաղող ներկայումս պատահում է Փարփուլ գյուղի անտառներում: Այն աճում է հաստարուն կաղնիներին փաթավելով և հասնում մինչև դրանց գագաթը:

անցին ջրանցքները, որոնցից մեկը այսօր էլ անցնում է քաղաքի միջով և կոչվում է քաղաքային ոռոգիչ ջրանցք (թաթաուլ)։ Նրա երկարությունը հասնում է մոտ 5—6 կմ-ի։ Ամենամեծ ջրանցքը՝ Ինալը, ունի 18—20 կմ երկարություն և դառնում է քաղաքից գուրս։ Մեծ ջրանցքների թվին են պատկանում նաև Ալվալըղը, Ղարասունը, Այս խոշոր ջրանցքները և նրանցից ճյուղավորված հարյուրավոր մանրերը գործում են մինչև օրս։ Խոշոր ջրանցքները ջրի հետ միասին Թերեքից այգիներն են բերում նաև մեծ քանակությամբ աղի։ Այդ սթանչիկի պարարտանյութը հարստացնում է հողի որսկը և ավելացնում խաղողի բերքը։

Քաղաքում եղել է մշտական գործող հատուկ ջրային կոմիտե, որը հսկել է լեռնական համարվող գլխավոր ջրանցքները։ Կոմիտեի պարտականությունն էր ջրի կանոնավոր մատակարարումը։ Մանր թաթաուլները համարվում էին մասնավոր սեփականություն և պահվում էին այգիատերերի հաշվին։ Ամառվա ընթացքում այգիները ջրվում էին հինգ-վեց անգամ, սակայն չորսից ոչ պակաս (նույնն է և տոժ)։ Թաթաուլների ջրից օգտվելու համար սահմանված էր հերթականություն, որ ոչ ոք իրավունք չուներ խախտելու։

Այգիները մշակելու համար պահանջվում էին բանվորական ձեռքեր (մշակներ), որոնց քանակը մեկ սեզոնի ընթացքում, ըստ տարեկան աշխատանքի ծավալի, տատանվում էր երեք հազարից մինչև 15 հազարի միջև։ Բանվորական կազմը բաղադրվում էր՝ նոգայների, լեզգիների, թավուների, կուրդիների, կազակների, հիմնականում գյուղացիներ և սահմանափակ թվով՝ տեղացի հայեր։ Բանվորները վարձվում էին մեկ շաբաթով կամ ամբողջ սեզոնով։ Նրանց վարձաարությունը 80 կոպեկից մինչև 3 ռ. 50 կոպեկ էր՝ նայած աշխատանքի տեսակին, ուտելիքը՝ այգետիրոջ հաշվին։

Մեծ և միջին կարողության տնտեսություններում կար մշտական կամ ժամանակավոր կառավարիչ, որ կոչվում էր «թամադա»։ Վերջինիս պարտականությունների մեջ էին մտնում բանվոր վարձելը, աշխատավարձ վճարելը և բանվորների աշխատանքին հսկելը։ Թամադան սաանում էր տարեկան 80 ռուբլուց մինչև 350 ռուբլի աշխատավարձ, որը նույնպես կախված էր աշխատանքի ծավալից։ Խոշոր այգիները ունենում էին մշտական պահակներ, որոնք զրո տարին տյգում էին գտնվում։

Ղզլարի բանվորությունը ուներ իր ավան-

գույթները, որոնք անցնում էին սերնդից սերունդ։ Օրինակ՝ անգրագետ բանվորները, հիմնականում նոգայները, աշխօրի հաշիվը պահելու համար ունեին փայան տախտակ-ձողիկներ, որոնց վրա աշխատած օրերի համար դանակով նշան էին անում։ Շարաթվա վերջում այդ ձողիկները հանձնվում էին թամադային (կառավարիչին), որին համապատասխան յուրաքանչյուր բանվոր ստանում էր հատանելիք շաբաթական աշխատավարձը։



3. Հաշվեճող։ Ձողի վրա նշանակված է չորս շաբաթվա աշխատանքը։ Առաջին երեք շաբաթում բանվորը աշխատել է 6-ական օր, իսկ վերջին շաբաթում՝ միայն 5 օր։ Բանվորը մեկ օր չի աշխատել հիվանդության կամ այլ պատճառով։ Նշանները մի կողմում լրանալուց հետո գրվում էին ձողի մյուս երեք կողմերում։


Հաշվարկը կատարվում էր կամ ջարաթվա վերջին, կամ սեզոնը մեկ անգամ։ Բանվորների մեծ մասը աշխատում էր միևնույն այգետիրոջ մոտ մի քանի տարի՝ վաղ գարնանից մինչև ուշ աշուն, խոշոր այգիներում՝ ամբողջ տարին։

Խաղողի այգիների խնամքն ու մշակումը կատարվում էր հեակյալ կերպ։ Նոյեմբերի սկզբին խաղողի էտած ողթերը ձմռան ցրտից պաշտպանելու համար ծածկում էին հողով։ Մաքուր ամսին, երբ եղանակները սկսում էին տաքանալ, վաղեմը հանում էին հողի տակից, ամրացնում աղաղուղները (նեցուկներ)։ Վաղեմը մի քանի տեղից կապում էին նեցուկներին (գետնից 1/2 կտմ 2/3 մ բարձրությամբ) և, մինչև բողբոջների բացվելը, ավարտում այդ աշխատանքը։ Սրան հաջորդում էր առաջին «ալաղը» (մուխտտերի հեռացումը)։ Երկրորդ և երրորդ ալաղը արվում էր որոշ ընդմիջումներով։


Այգիներում հոսող թաթաուլները նաև սահման էին երկու-երեք հարևան այգիների միջև։ Թաթաուլների երկու կողմից ջարքով տնկում էին մոշի թփեր կամ ուտենու ու թթի ծառեր՝ որոնցից աշնանը պատրաստում էին նեցուկներ։ Այդու մեջտեղից անցնում էր լայն ճանապարհ, որ կոչվում էր «խեյվան»։ Սա այգին բաժանում էր երկու

մասի: հոշոր այգիները ունենում էին 4—5 խեյ-վան, որոնց երկարությունը հասնում էր 1—1½ կմ-ի: Վազերը կանգնած էին կանոնավոր շարքերով (շախմատային կարգով) իրարից 1/2 մ հեռավորության վրա: Այգին ռաժանվում էր «թախաաների» (րաժնեհարածքների), որոնք առանձնանում էին մանր առուններով:

Այգեկույթը Ղզլարում սկսվում էր սեպտեմբերի կեսին: «Մշակները» (րանվորները) դասավորվում էին ըստ պահանջվող աշխատանքի: Երկու կամ մի քանի ասանյակ րանվորներ քաղում էին խաղողը, անդամորում փայայա կամ երկաթյա գուլլերի ու կողովների մեջ, իսկ մյուսները քա-



4. Չանը խաղողի հատիկներից ռաժանելու փայլ:





5. Զարի (մետաղ)՝ դինին տակառի մեջ լցնելու ձաղար:

ղած խաղողը մեծ փայտյա ամաններով, «արաբայով» (ընոնասայակ) ասնում էին այգու ռակը: Բակում՝ ծածկի աակ գանվում էր «ղայրղը» (մեծ տաշոր), որի մեջ էին պարպում ըերած խաղողը: Երկու-երեք քանվոր փոցներով խաղողի հատիկները անջատում էին շանչերից, հատիկները լցնում հատուկ աուպրակների մեջ, ըերանները պինդ կապում ու փոխանցում էին մյուս րանվորներին: Սրանք աշխատում էին առաջինին զուգահեռ գործված երկրորդ տաշաի մեջ: Մինչև ծունկները մերկ ոտներով նրանք անընդհատ տրորում էին աուպրակների խաղողը, միաժամանակ քթի տակ որևէ երգ երգելով:

Արնագույն հյութը աաշաի միջով հոսում էր մեծ շանի մեջ, որը դրված էր տաշաի աակ արված փոսի մեջ: Մյուս րանվորները գուլլերով շիրան վերցնում էին շանից և լցնում իրար կողքի շարված, մաքուր լվացված մեծ աակաոների մեջ: Տակաոը լցնելուց հետո (3—4 գուլլ պակաս) նրա ըերանը թեթե փակում էին, որ մեջը միջաաներ չմանեն: Եաղողից մնացած «ճաճան» դեն չէին գցում, այլ օգտագործում որպես մակարդիչ նյութ գինի պատրասակիս:

Մաքուր շիրա սաանալու համար կաարում էին հեանյալ աշխատանքները. պղտոր շիրան

լցնում էին 50 կամ 60 գուլլ աարողությամր տակառի մեջ (3—4 գուլլ պակաս) և երր հեղուկը պաղարում էր եոսլ, որի սեողությունը կախված էր եզանակի ջերմությունից (մոաավորապես 15 օր) ու պարզվում էր, շիրան լցնում էին մաքուր աակառի մեջ: Նոր տակառի մեջ շիրան սկսում էր շատ թույլ նորից եոալ: Երր եոը ըոլորովին գաղարում էր, նշանակում էր գինին պաարասա է, աակառի ըերանը պեաք էր փակել: Նայած խաղողի աեսակից՝ գինին սաացվում էր վարգագույն, կարմիր: Եթե ուզում էին սաանալ քաղցր գինի, շիրան լցնում էին ծծմրով ծխված տակառի մեջ և ըերանը փակում: Մուգ գույնի գինին սաանում էին ճաճայի օգնությամր: Գինին եոալուց և փայտե խաոնիչով հեղուկը հաճախակի խաոնելուց հետո, 11—13 օր անց ճաճան վեր էր ըարծրանում: Ներքեի ծորակից պարզ կարմիր գինին դաարկում էին ուրիշ մաքուր տակառի մեջ: Ծաճան գցում էին մամիչի (մանգանայի) աակ և նրանից հանված վերջին հյութերը լցնում աակառի մեջ: Այս եզանակով սաացված գինին լինում էր մուգ գույնի և աաիպ:



7. Փայտե խաոնիչ: Երկար փայտե ծ. կտե (մետաղ)՝ ձողն ունի մանր փշեր, որոնք արագացգինի լցնելու աման, նում են ճաճայի անջատումը հեղուկից:

Նախքան աակաոները գործադրելը, դրանք լվանում էին եոացրած ջրով և սողայով: Սողայաջրով լիքը աակառի ըերանը ամուր փակում էին ու գլորում, որ ըոլոր պատերը սողայաջրով լավ լվացվեն: Մաքրում էին նաե ռքուքուրթ խիելով, այսինքն՝ ծծմրով ծխելով:

Տարրեր խաղողներից և դրանց մնացորդներից անայնագործական եզանակով թորել են նաե մեծ քանակությամր օզի, որի սարքավորումը շատ պարզ կաոուցվածք է ունեցել: Այսպես՝ օջախի կրակի վրա գրվում էր կաթսա, որի մեջ լցվում էր ճաճան: Կաթսայի կաիարիչը վերեում ուներ մի անցք, որի մեջ մացվում էր Ո տաոյաձեի երկծնկանի լայն խողովակ: Եիվող ճաճայի գոլորշիները ըարծրանալով սաոը ջրի միջից անցնող սյգ խողովակով, սաոչում, վերածվում էին օղու կա-


թիւներէ ե կաթիլ-կաթիլ ծորում խողովակի տակ
դրված որեէ սմտնի մեջ: Ամրողը սարքավորումը
պղնձից էր:

Ռուսաստանի տնտեսութեան համար կարեոր

նշտնակութիւն ունեցող այս գինեգործական շըր-
շտնը դուրս չէր մնացել ցարական կառավարու-
թեան ուղադրութիւնից, և դեռեա 1806 թ. Ալեք-
սանդր կայսեր հրամանով, Ղզլարի մոտ հիմնա-



8. Մամլիչ մեքենա (սմանգանա): Այս մեքենան ունի երեք ճմլիչ: Վերինը պտտվելով
խաղողի հատիկները անջատում է շանչերից, իսկ ներքեի երկու ճմլիչները, իրար հա-
կադիր պտտվելով, քարղում են հատիկները, շհաղցնելով դրանք տրորվելու առթիճանի:
Ջարգված խաղողը լցնում էին մաքուր տակառի մեջ և նրանից ստանում գինի:



9. Տակառը ծծմբով ձխելու դո-
ծիք: Տակառի վրա անգավորված
է երկաթե վառարան (նկարում աշ-
կողմից), որի մեջ կախում էին
ծծմբի ձող: Զոռո վառվելով
ծուխ է արձակում և խողովակի
միջով անցնելով տակառի մեջ՝
մաքրում նրա պատերը, ամրաց-
նում:



10. Լիվեր (մե-
տաղ)՝ տակառից
գինի հանելու գոր-
ծիք:

զըվում է գինեգործական ուսումնարան՝ իր փորձ-
նական այգով: Գերմանիայից հրավիրվում են
մասնագետ գինեգործներ, որոնք իրենց հետ րե-
րեցին և անդում անարածեցին խաղողի լավ ան-
սակներ (րիսլինգ, մալվադեր, կիպրոսի, սիլվա-
ներ, դանտի, հունգարական մուսկատ, պեդրո,
տոկայ, օպորտո, պինո սպիտակ, մեռլո, մա-
դերա, ալեատիկո, մուսկատ: լյունել, ոռլենգեր):
Սրանք տեղում լավ աճեցին:

Մասնագետները աչքաթող չարին նաե ան-
գական անասնները՝ ալ ու սև թավի խաղողները,
քիշմիշն ու սպիտակը սեզանի տեսակները՝ կար-
միր և սպիտակ, ռայծի պտուկները, կակալի և
շտհտեն, թիթի, գավագոզ, գուլտրի, գլանջի կար-
միրը և այլն:

Շնորհիվ այս նախաձեռնութեան, փորձնական

այգու գինիները խոշոր քաղաքների շուկաներում մեծ համրավ ձեռք բերին: Գինիները արաահանվում էին Մոսկվա, Նիժնի-Նովգորոդ, Խարկով, Սոմարոպոլ և այլուր, ուր վաճառվում էին երեք անգամ ավելի թանկ, քան անդալանները: Փորձնական տյգին տարեցտարի ընդարձակվելով, հասավ մինչև 40—50 գեսյատինի: Սակայն հետագայում թե՛ դպրոցը, թե՛ այգին անուշադրության մատնվեցին: Ուսումնարանի և այգու ղեկավարությունը անցավ շահամուլ շինովնիկների ձեռք, ի վերջո, 1866 թ. այգին վաճառվեց 20 հազարով: Դպրոցի գոյությունը տևեց 60 ամիս:

Ղզլարի տեղական խաղողներից ամենատարածված անասկներն են՝ սև, ալ և թավի խաղողները:

1. Սև խաղողի թուփը ուժեղ է, ոստերը՝ կրկար ու հասա, տերևները խոշոր, հինգ անկյունա՝ մուգ կանաչ, ողկույզները՝ խոշոր, կոգբի ճյուղավորումներով, պտուղները գնդաձև են, միջին մեծության, սև գույնի, մսոա, հյութը կարմիր: Այս տեսակը ծաղկում է մայիսի վերջում, պաուղը հասունանում սեպտեմբերի կեսին, շաքարի պարունակությունը՝ 21 %, թթվությունը՝ 12—18 %:

2. Թավի կամ «գիմրի» խաղողի թուփը միջակ է, ոստերը՝ երկար ու բարակ, տերևները՝ միջին մեծության, սուր ծայրերով: Ողկույզը՝ միջին մեծության, կոնաձև ու սեղմված: պաուղները կլոր են, շատ սև (կապույտ փառով) և հյութալի: Հյութը վարգագույն է: Սյս խաղողի գինին աաիպ է և ավելի կոշտ, քան սևինը: Մտղկում է սևի հետ միաժամանակ, բայց հասնում է քիչ ավելի շուտ: Շաքարի պարունակությունը 20 % է, թթվությունը՝ 11 %: Այս խաղողը մուտք է գործել Դադրստանից:

3. Ալ խաղողի թուփը ուժեղ է, ոստերը բարակ, միջին երկարության, տերևը՝ մուգ կանաչ: Ողկույզը խոշոր է ու չուված, պտուղները՝ կարմիր ու երկարավուն, ծածկված կապտագույն փառով, հյութալի է, հյութը սպիտակ: Սա բերքաաու տեսակն է, կլիմայական խիստ պայմաններին դիմացկուն: Մտղկում է սևի հետ միաժամանակ, սակայն պտղաբերում է քիչ ուշ: Շաքարը՝ 18 տոկոս, թթվությունը՝ 15—20 տոկոս:

Խաղողի անասկներից ներկայումս ամենատարածվածն են ալը և ոկացիթկին, որոնց զարգացմանը հաաուկ ուշադրություն է դարձվում Ղզլարի կոլտնտեսություններում և սովխոզներում: Սրանք կոնյակի սպիրտի լավագույն խաղողա-

տեսակներն են: Բացի այդ, տլ, ոկացիթեի և պինուրի (տոկտյ) խաղողներից ստացվում են անուշի ընտիր գինիներ: Մշակվում են նաև սուպերավի, շինգիլի դաոա, զուլարի, կակալի (ընկույլի խոշորություն), տղադտյի, քիշմիշի, կարերնե, լիսլինգ, մուսկատ հունգարական, մուսկատ տլեքսանդրիական, Ղզլարի սև, թավի և այլ խաղողատեսակներ, որոնցից ստացվում են միութենական և համաշխարհային ճտնաշում ունեցող գինիների տեսակներ:

Ղզլարը հայանի է նաև կոնյակի արտադրության: Տեղում կոնյակի տրտադրության հիմնադիրն է եղել վաճառական Սաբաշև: Մինչ այդ, Ղզլարի գինին տարածված էր ամրողջ Ռուսաստանում: Ղզլարի խոշոր այգետերերը մեծ քանակությամբ գինի և օղի էին արտահանում ուրիշ քաղաքներ, մանավանդ Նիժնի-Նովգորոդ, որն այն ժամանակ հայտնի էր իր տոնավաճառներով: Ղզլարի մի քանի հայ վաճառական գինեգործներ հիմնել էին օղու գործարաններ, որոնք անալնագործական ընույթի էին: Սյս եղանակով խաղողից սաացված օղին կարճ ժամանակում տարածվեց ամրողշ երկրում և ստացավ «Կիզլարկա» անունը: Բայց շուտով հրապարակ կվավ դրա նրցակիցը՝ հացի օղին, որը դգալի հարված հասցրեց օղեգործներին: Կաղնու տտկաոներում մնալուց դեղնած սպիրտը, օղին սկսեցին կոնյակին նմանեցնել: Սակայն 1880 թ. գինու և օղու մաքսի բարձրացումը վերջնական հարված հասցրեց մանր գործարանատերերին: 40 գործարանից միտյն 10-ը մնացին, որոնց թվում նաև Ստրաշևի ֆրանսիական կատարելագործված շոգեշարժ մեքենաներով գործարանը: Ստրաշևին հայանի էր կոնյակ ստանալու տեխնոլոգիան, և առիթից օգտվելով, նա մանր այգետերներից սկսեց շիրա գտնել ու իր սպիրտի գործարանում կոնյակ ստանալ: Սյսպես, 1889 թ. Ղզլարում ստեղծվեց կոնյակի արաադրություն: Սկզբում Սարաշևը իր հումքը Ղզլարից ուղարկում էր Թիֆլիս, հիմնական բազան, ուր և տեղի էր ունենում կոնյակի լրիվ հասունացումը:

1904—1905 թթ. Սարաշևը Ղզլարում կառուցում է նախ երկու և ապա չորս 65-դեկալիարանոց հրային «շարանակյ» տիպի գործարաններ: Դրանք աշխատում էին 9 ամիս և ստանում 50—55 ասաիճանի սպիրտ: Սյսանդ արտադրվում էր մեկ տարեկան կոնյակ: 1913 թ. Սարաշևի գործարանը Ղզլարում արաադրեց 6.500 դեկալիտր

55—58-ի կոնյակի սպիրտու Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կոնյակի սպիրտի արտադրությունն արգելվեց։ Այն վերսկսվեց միայն 1924 թ. սովետական կառավարության որոշմամբ։

Ակաած այդ թվականից տարեցտարի կատարելադործվեց և հղորացավ Ղլլարի կոնյակի դործարանը, որի թողարկած արտադրանքները արժանացել են միջազգային բարձր պարգևների և մրցանակների։

Ներկայումս դործարանը արտադրում է ութ տեսակի կոնյակ, որոնցից նշանավորներն են՝ «Դադստան», «Կիլլար», «Հորեյլանական», «Դադրստանյան» և «Լեզգինկա» մականիշները։

Անասնապահություն, կաթնատնտեսություն։ Անասնապահությունը Ղլլարում առավելապես զարգացած էր։ Տարածված էին մանր ու խոշոր եղջերավոր անասունների տեղական ցեղերը։ Բանող անասուններն էին՝ ձին, եղջր, արու դոմեշը և ուղտը։ Կով և կթու դոմեշ Ղլլարի հայերից շատերն ունեին։ Պահում էին նաև մի քանի ոչխար, այծ, խոզ։ Կովը, այծը և դոմեշը պահում էին որպես կաթնաառու անասուններ, իսկ ոչխարը և ուղտը՝ նաև մսի և բրդի համար։ Խոզը՝ միայն մսի ու ճարպի համար։ Ձին ու եղջր օգտագործվում էին նաև որպես զրաստ՝ այգուց տուն և այլուր փոխադրումների համար։

Բուրդ անասունները դարձան քշվում էին նախիր, որն ամեն տոմարում հավաքվում էր Թերեքի ափին։ Տավարը բերում, հանձնում էին նախըրշիններին։ Նրանք նախիրը կտմրշի վրայով տան էին կացնում Թերեքի մյուս ափը, ուր կտյին հարուստ տրոտավայրեր։ Ամբողջ օրն այնտեղ արածացնելուց հետո, երեկոյան դեմ, նախըրշիները քշում էին քաղաք՝ տերերին հանձնելու։ Նախըրշիները բոլորն էլ վարձվում էին, որոնք, բացի վարձից, ստանում էին նաև չարուղներ (տրեխներ), համապատասխան ղզեստ և յափնջի։ 16—17-ից ցածր տարիք ունեցողներին նախիր չէին վստահում, նրանք պետք է լինեին աարեց և փորձված մարդիկ։ Ցեղական ցուլերին նախրում պահում էին հասարակության հաշվին։

Կթվող անասուններն ապահովվում էին կերի խան վարձատրությամբ։ Կահ էին տրվում ծանոթ լեռնականներին, որոնք դրանց պահում էին իրենց առկներում։ Մնելուց հետո այդ անասունները ետ էին վերադարձվում տերերին։

Կթվող անասունները ապահովվում էին կերի

ձմեռվա պաշարով՝ խոտ, թեփ, գարի և մանրած եգիպտացորեն։ Տավարն ամբողջ կարճատե ձմեռը, որը Ղլլարում ցրտաշունչ չի լինում, անց էր կացնում մաքուր և տաք դոմերում։ Տաքությունն անհրաժեշտ էր մանավանդ նորածին անասունների համար։

Կովն ու դոմեշը խնամում էին աղամարդիկ։ Նրանք էին անասունին կերակրում, շուր տալիս, գոմի աղբը մաքրում, աակը փոխում։ Իսկ կանայք կթում էին։ Այս պարտականությունը կատարում էին տատը կամ տան ավագ հարսը։ Գարտաճանաչություն։ Կաթը կթում էին դուլի կամ հատուկ ամանի մեջ, որ կոչվում էր կովկիթ։ Կթելուց հետո կաթը քամում էին, նրանից պարաստում սեր, շոռ, մածուն, պանիր, կարագ։ Կաթի ղղալի մասը օգտագործվում էր աան կարիքների համար, իսկ ավելացածը վաճառվում հարեաններին կամ հանվում շուկա։

Ըստ տեղեկությունների, ղղլարցիք պահել են ուղտեր։ Կաթողիկոսական արխիվից տեղեկանում ենք, որ 1813 թ. Ղլլարի հայ հասարակությունը էշմիածնի մայր Աթոռին է նվիրել 36 ուղտ (կաթ. դիվան, փաստ. 24, վ. № 80, 1813 թ., 28 սեպտեմբերի, Մատենադարան)։ Իրեն դրաստ օգտագործվելուց բացի, ինչպես նշվել է, ուղտերը տալիս էին նաև բուրդ։ Ոչխարներին և ուղտերին տարին երկու անգամ հաաուկ մկրատներով խուսկում էին։ Ատացված բուրդը մանում, թել անում և նրանից գործում էին շոր, շավար, շալ, դուպլաներ, իսկ մաղից՝ ձուկ որսալու թոռ, փալաս և պարան։

Այգին և առհասարակ ողջ ունեցվածքը ապահով պահելու համար այգու բակերում միշտ պահվել են մեծ դամփո շներ։ Անասուններին չար աչքից դեբծ պահելու համար, կովի, դոմեշի վզից թալիսման էին կախում։ Գոյություն ունեին դանաղտն նախապաշարումներ, օրինակ՝ եթե կովը կթելիս օտար մարդ ներս մտներ և դրա հաեանքով կովը քիչ կթվեր, այդ մարդը կդիտվեր որպես «ծանդր ոտ» ունեցող, պետք է խույս տալին նրանից հատկապես կովը կթելիս։ Որպեսզի անասունը չկորչեր և հեշա ճանաչվեր, նրա աղդրին «գամղա» (ավանդակտն նշան) էին խփում։ Կռվարար կովի կամ դոմեշի եղջյուրների մեշաեղում աաշտակ էին կապում, որ նա դադարի իր սուր եղջյուրները նախրում ուրիշ անասունների դեմ բանեցնելուց։

Կուլանտեությունների ատեղծումից հետո,

երր գաշա մուռք գործեցին արակտորը, կոմ-
բայնը և տյլ մեքենաներ, հետզհետե ձիու և եզի
գործածութիւնը նվազեց: Ուզտը, որ մինչ երկա-
թուղին Ղզլարի և Գրոզնիի միջև շաա կարեոր ու
տնփոխտրինելի գրաստ էր Ղզլար—Աստրախան
առեսրական երկար ճանապարհին, նույնպես
օգտագործումից դուրս եկավ:

Ղզլարի տեղական ցեղի կովերը խոջոր չէին,
սակայն կաթը յուղալի էր: Ղզլարցի սիրում էր
գոմեշի կաթն ու նրանից ստացած սպիտակ, սնու-
շահում սերը: Մտածմբ գրանով պետք է բացատրու-
անասուն գնելիս՝ ընտրութեան ժամանակ, գոմե-
շին գերագասութիւն տալը:

Ղզլարում տարածված էր նաե գմակտվոր ոչ-
խարը, որը սքանչելի բուրդ էր աալիս: Այժմ
գրանց սե և մոխրագույն տեսակներն են բաղ-
մացում Ղզլարի անտեսութիւններում:

Հայկական ալլ գավառների նման, Ղզլա-
րում էլ հնուց ընդունված սովորույթ էր անասուն-
ները աղամարդու ձեռքով մորթելը: Նույնիսկ
հավ մորթելը հայ կնոջ համար անվայել է հա-
մարվել:

Թուլնարածութիւն: Ղզլարի հայերը պահում
էին ղանաղան ընտանի թռչուններ:

Թռչուններին նայելու, կերակրելու և ձվերը
հավաքելու գործը պատկանում է տանտիկնոջը:
Հավերին և մյուս թռչուններին կերակրում էին
գլխավորապես կորեկով, մանրած եղիպտացորե-
նով, հացի փշրանքով և կանաչով: Ձվի կեղեի ամ-
բութեան համար հավին տալիս էին ձվի կճեպ և
ավտղ: Հտվի և մյուս թռչունների ձու ածելու տե-
ղում տանտիկինը միշտ թողնում էր թրնակալ, որ-
պեսզի թռչունը ձու ածելու տեղը չփոխեր: Թուխս
նստելու ժամանակ տանտիկինը ղննում է յուրա-
քանչյուր ձուն, որ պիտի գրվեր թուխսի աակ:
Արեի շողքի տակ նա նայում էր՝ եթե ձվի փոսիկը
գաղաթի կողմն էր, ուրեմն ապաղա ճուտը աքա-
ղաղ կլինի, իսկ եթե փոսիկը կողքին՝ վառեկ:
Թուխս հտվի տակ փռվում էր գարման, վրան
շարվում քստն հատ սաուղված ձու (մեծ մասամբ
վառեկների ձու): Երեք շարաթ հետո ձագերը
պետք է դուրս գտին ձվերից: Ծուտերին կերակ-
րում էին պինդ եփած ձվի փշրանքով:

Թառեղու տեղը՝ «հավաթաղ» գանվում էր
«սարայի» (ցախատան) տակ, ուր դետնից երկու
մետր բարձրութամբ մի քանի հորիզոնական
փայտե ձողեր էին հարմարեցնում, որոնց վրա և
թառում էին հավերն ու հնդկահավերը:

Ղզլարում ընդունված և գերադասելի էր սպի-
տակ հավը, որը ածող ցեղ էր համարվում: Ղզլա-
րի հայ կանայք թռչուններին երբեմն տալիս էին
տնուններ, հտտկապես ածան, գեղեցիկ, շարաճճի
թռչուններին:

Բացի հավերից, Ղզլարում պահում էին նաե
բագեր, սագեր, ցիցտրներ, հնդկահավեր և ուրշ
թռչուններ: Զուր սիրող բաղի համար բակում
ջրափոս էին փորում կամ ջրով լի մեծ աաշտ
գնում:

Ընաանի թռչունների շարքում առանձնակի
տեղ էր գրավում «կուրկուր» (հնդկահավը), որը
հայտնի էր իր համեղ մսով: Չկար մի բակ, որ
կուրկուր չունենար: Հարուստները գրանցից
տասնյակներով էին պահում թե՛ քաղաքում և թե՛
այգում: Կուրկուրների ամենասիրած կերը եղիպ-
տացորենն էր և ճաճան: Այս կերից գրանք լավ
գիրտնում են (7—8 կգ): Սովորաբար գրանց մորթը
կատարվում էր շրօրհնքի տոնին: Այդ օրը ղզլար-
ցու տոնակտն սեղանը լիտկատտոր չէր համալ-
վի, եթե սեղանին չլիներ մեծ սինիով աապակված
հնդկահավ, կողքին յուղալի փլավն ու Ղզլարի
կարմիր գինին:

Վայրի թռչուններից գզլարցու սիրելին էին
գարնան ավետտեր սարյակն ու ծիծեռնակը: Սը-
բանց համար շինում էին փայտե բներ ու ամրաց-
նում բարձր ծառերի գագաթին:

Ատելի էր բազեն («ուրուր», «շալաղան»)՝
ընտանի թռչունների ահն ու սարսափը:

Վատ նշան էր, երբ հավն աքլորի պես կան-
չում էր: Այդ հավին տեղն ու աեղը մորթում էին:

Շեքամապաճութիւն: Պետրոս I-ը, Ռուսաս-
տանի շահերից ելնելով, ձգտում էր ընդլայնել
երկրում մեաաքսի արտադրութիւնը: Այդ նպա-
տակի համար շատ հարմար էր Թերեքի շրջանը,
ուր կլիմայական նպաստավոր պայմանները թույլ
էին տալիս շերամի թթենիներ աճեցնել: Զանա-
ղան միջոցառումների թվում նա Ռուսաստան
հրավիրեց նաե ղարաբաղցի վաճառական Սաֆար
Վասիլեին (ուրիշ աղբյուրներում Բարսեղյան) և,
մեծ արտոնութիւններ աալով նրան, պաալիրեց
Թերեքի ափին, կաղակների դյուղերին մոտ, կա-
ռուցել մետաքսի գործարան, հարմար հողերում
աճեցնել «շալթուկ» (բրինձ) և բամբակ:

Սաֆարը Ղզլար ավանի մոա ընարեց մի
վայր, ուր դեռ շաա վաղուց հայ վաճառական-
ները գալիս էին աեղական բնակչութեան՝ շեռնա-
կտնների և նողայների հետ ապրանքներ փոխա-

նակելու նո 1718 թ. Ղզլարի մոտ կառուցում է առաջին մետաքսագործարանը, ուր պատրաստում էին գործվածքներ, «իարչա» (թավիչ) և այլն: Սյսպիսով, փաստորեն Սաֆարին է վերագրվում Ռուսաստանի հտրավում շերամի արտադրության կաղմակերպման գործը:

Տարեցատարի շերամագործությունն այնտեղ պարզացավ և դեպի իրեն ձգեց Պարսկաստանի հիմնականում հայ ռաղմաթիվ ընկերները: Մի րանի տարի անց Սաֆարը շերամի գործարան է հիմնում Աստրախանի մոտ: Մեծ արտոնություններ ստացան նաև Պարսկաստանի և աեդի ոռւս ու հայ առևտրականները, որոնց միջոցով պարսկական մետաքսը կարելի էր ջրային ճանապարհով փոխադրել մինչև Պետերբուրգ:

Շերամապահությունը դարձավ գրեթե ամբողջ բնակչության զբաղմունքը: Այս գործը, կարծես, ուի տեսակ հաճելի ժամանակ էր զգլարցու համար, և նա ամենայն սիրով նվիրվում էր շերամի որդի աճեցմանը, մանավանդ, որ օգուտն էլ վատ չէր: Շերամի համար հատկացվում էր մի առանձնատնակ, ուր չկար կողմնակի անց ու դարձ, րացի հոգ տանողից:

Մի ամիս էր աևում շերամի որդի կյանքը, որից հետո նա րարձրանում էր դեպի առաստաղը և ավելի հաաուկ պատրաստված ոստերի վրա սկսում հլուսել ըոժոժը: Հետո ըոժոժները հավաքում, դնում էին սինինների վրա ու հանդցրած, բայց դեռ տաք վառարանի մեջ սլահում այնքան, որ ըոժոժի միջի հարսնյակը սատկի, եթե ոչ, ըոժոժի հարսնյակը, վերածվելով թիթևոի, կծակեր ու կփչացներ ըոժոժի մետաքսաթևը:

Շերամի որդերը կերակրվում էին թթենու տերևներով: Շերամապահի ղլիավոր պարտականությունն էր ժամանակին հասցնել թթենու տերևները, որպեսզի որդերը սովածությունից չհիվանդանային ու չսաակեին: Պեաք էր շուտ-շուտ փոխել դարակները՝ աղրը մաքրելու համար: Առողջ որդերը դարակի անցքերով վերև էին րարձրանում, իսկ թույլ և հիվանդ որդերը չէին կարողանում վեր ելնել, և որպեսզի չվարակեն մյուսներին, աղբի հետ դեն էին նետվում, ոչնչացվում: Ստացված հումքը հանձնվում էր տեղական գործարաններին:

1810 թ. մետաքսի բերքը Ղզլարում 250 փթի է հասել (ճանապարհորդ Ստեփանի տվյալներով):

Ներկայումս Ղզլարում մասնակի շերամա-

պահություններ զբաղվողներ շատ քիչ կան (հիմնականում թոշակառուները): Սակայն Ղզլարի կուտնտեսություններում ու սովխողներում շերամապահությունը եկամտարևր է համարվում, ստացվում է բավականին զգալի բերք, որը հանձնվում է պետական մետաքսագործարանին մշակելու համար:

